Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ `<< ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հ. Ճգնավորյանի անվան հ 5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ -ի տեխնոլոգիայի /14 դասաժամ/ ուսուցչի պաշտոնի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/:
2. Փաստաթուղթ/դիպլոմ/ ՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն/ Ձև 4/,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի!
7. Այլ պետությունների քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք.
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին, Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հ. Ճգնավորյանի անվան հ 5 հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)45-08-08 հեռախոսահամարով: